ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք. Երևան «04» 06 2020թ N 611-Ա

ՏՈՀՄԱՅԻՆ ՏԱՎԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂՆԵՐԻՆ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ) ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԻՆՉԵՎ 30 % ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ/ՀԱՄԱՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 26-ի «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երկրորդ միջոցառումը հաստատելու մասին» N 356-Լ որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետը՝

հրամայում եմ.

1. Հաստատել «Տոհմային տավարաբուծության նպատակով գյուղատնտեսությունում տնտեսավարողներին (բացառությամբ գյուղատնտեսական կոոպերատիվների) տրամադրվող վարկերի համար պետության կողմից տրամադրվող վարկի գումարի մինչև 30 % համաֆինանսավորման/համապարտության գործընթացի համար նախատեսված հավաստագրման» կարգը՝ համաձայն Հավելված 1-ի:
2. Հաստատել հավաստագրման նպատակով անասնաշենքին ներկայացվող պահանջների ցանկը՝ համաձայն Հավելված 2-ի:
3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Տիգրան Գաբրիելյանին:

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1
Էկոնոմիկայի նախարարի
2020 թվականի հունիսի __04_-ի
N _611-Ա__ հրամանի

ԿԱՐԳ

ՏՈՀՄԱՅԻՆ ՏԱՎԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂՆԵՐԻՆ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ) ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԻՆՉԵՎ 30 % ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ/ՀԱՄԱՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում է տոհմային տավարաբուծության նպատակով «ՀՀ տավարաբուծության 2019-2024թթ. զարգացման» ծրագրից (այսուհետ՝ Ծրագիր) օգտվելու դեպքում գյուղատնտեսությունում տնտեսավարողներին (բացառությամբ գյուղատնտեսական կոոպերատիվների) տրամադրվող վարկերի համար պետության կողմից վարկի գումարի մինչև 30 % համաֆինանսավորումից/համապարտությունից օգտվելու համար նախապայման հանդիսացող հավաստագրի (այսուհետ՝ Հավաստագիր) տրամադրման գործընթացը:

2. Ծրագրից 30% համաֆինանսավորման/համապարտության պայմանով կարող են օգտվել այն քաղաքացիները, ովքեր ունեն տոհմային խոշոր եղջերավոր կենդանիների (այսուհետ՝ ԽԵԿ) անկապ բոքսային պահվածքի համար նախատեսված անասնաշենք կամ հանդիսանում են «Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցություն» ծրագրի շահառու և ամբողջությամբ ավարտել են անասնաշենքի կառուցումն ու տեխնիկական վերազինումը (այսուհետ՝ Հավակնորդ):

3. Հավակնորդները հավաստագիր ստանալու և Ծրագրից օգտվելու համար, նախքան Ծրագրի շրջանակներում վարկ տրամադրող ֆինանսական կառույցին (այսուհետ՝ Ֆինանսական կառույց) տոհմային ԽԵԿ ձեռք բերելու վերաբերյալ դիմում-հայտի (որտեղ

նշվում է դրանց քանակը, ձեռք բերման վայր(եր)ը, (հասցե), ներմուծման դեպքում՝ ներկրման ժամկետները) և ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն (այսուհետ՝ Նախարարություն) ձեռք բերման ենթակա ԽԵԿ-երի տոհմային վկայականների և քարտերի ներկայացումը, էլեկտրոնային եղանակով դիմում են Նախարարությանը՝ նշելով 30% համաֆինանսավորումից/համապարտությունից օգտվելու մտադրության, անասնաշենքի գտնվելու վայրի, առկա և ձեռքբերման ենթակա տոհմային ԽԵԿ-երի քանակների մասին տեղեկատվությունը, ինչպես նաև՝ կոնտակտային հեռախոսահամար:

4. Նախարարության համապատասխան ստորաբաժանումը դիմումը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է այցելություն դիմումատուի տնտեսություն՝ տեղազննության իրականացման և Հավելված 2-ով սահմանված չափանիշներին անասնաշենքի համապատասխանության ուսումնասիրման նպատակով:

5. Անասնաշենքի՝ Հավելված 2-ի բոլոր չափանիշներին համապատասխանության դեպքում տրամադրվում է Հավաստագիր:

6. Հավակնորդը Նախարարության կողմից իրականացված գնահատումից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացվում է Հավաստագրի տրամադրման կամ դրա տրամադրումը մերժելու մասին:

7. Հավաստագրում նշվում է անասնաշենքի համապատասխանությունը Հավելված 2-ի պահանջներին, ինչպես նաև կենդանիների առավելագույն քանակը տվյալ անասնաշենքի համար:

8. Հավաստագիրը Ֆինանսական կառույցին ներկայացվում է տոհմային ԽԵԿ ձեռք բերելու նպատակով վարկ ստանալու վերաբերյալ դիմում-հայտի հետ միաժամանակ:

9. 2020 թվականի ընթացքում տրամադրված Հավաստագրերի գործողության ժամկետ սահմանվում է 2020 թվականի դեկտեմբերի 31-ը:

ՀԱՎԵԼՎԱԾ 2
Էկոնոմիկայի նախարարի
2020 թվականի հունիսի 04-ի
N _611-Ա___ հրամանի

ՑԱՆԿ
հավաստագրման նպատակով անասնաշենքին ներկայացվող պահանջների

Չափանիշ	Պահանջ
Պահվածք	Անկապ բոքսային
Տանիքի կամ առաստաղի բարձրություն	Նվազագույնը 6 մ
Ջրի մատակարարում	Մշտական
Կիթ	Կթի շարժական սարքավորում կամ դույլերով կթի ստացիոնար համակարգ
Նստելատեղ	Կենդանիների համար ռետինե ներքնակներ՝ 1 գլխի համար 1 ներքնակի հաշվով, կամ ծղոտե խորը ցամքարներ
Պաղեցման տանկ	600 լ՝ 50-ից ավել կենդանիների դեպքում
Անասնագոմի սրահի չափեր	Նվազագույնը 8 մ^2 տարածք՝ 1 կենդանու հաշվով